ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1957 Общественные науки

Գր. Հակոբյան

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԿԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԵՐԱԺՇՏՈՒՀԻՆ

Մեր հին գրականության պատմության մեջ 8-րդ դարը շատ ագքատ է։ Եթե նախընթաց՝ յոթերորդ դարում հիշատակվում են քսանից-քսանչորս անուններ, որոնք զբաղվել են մատենագրությամբ, բանաստեղծությամբ, հրապարակախոսությամբ ու գիտությամբ, տպա 8-րդ դարում մենք հանդիպում ենք միայն աչքի ընկնող երեք անունների՝ Օհան Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի և այդ դարի ավերածությունները նկարագրող պատմիչ՝ Ղևոնդ վարդապետ։

8-րդ դարի աղքատության ֆոնի վրա փայլում է մի գեղեցիկ աստղ դա Դվին մայրաքաղաքի կաթողիկոսարանի ավագ երեցի աղջիկը՝ Սահակդուխտն է։ Վերևում հիշված Ստեփանոս Սյունեցին Սահակդուխտի ավագ եղբայրն է, որը մեր գրականության պատմության մեջ հայտնի է ու նշանավոր որպես հրապարակախոս, շարականների հեղինակ և այդ շարականների եղանակներ հորինող՝ ականավոր երաժշտագետ։ Ճիշտ է, ավանդությունը Սահակդուխտի կողքին 8-րդ դարում դնում է նաև մի ուրիշ կին բանաստեղծուհու՝ Խոսրովիդուխտին, որը Վահան Գողթնացու քույրն էր և դարձյալ ըստ ավանդության՝ Գողթնացուն նվիրված «Զարմանալի է ինձ» հայտնի շարականի հեղինակը։ Սակայն ավանդությունը դեռ բոլորը չէ, որովհետև մեր գրականության պատմության մեջ գրավոր ոչ մի հիշատակություն չկա Խոսրովիդուխտի բանաստեղծ և «Զարմանալի է ինձ» շարականի հեղինակը լինելու մասին։ Մեր կարծիքով, Գողթնացու նահատակությանը ձոնված վերոհիշյալ շարականի հեղինակը ոչ թե Խոսրովիդուխտն է, այլ Սահակդուխտը։

Չնայած 7-րդ դարում նորից սկսվել էր արվեստի, գրականության, գիտության ու կուլտուրայի առաջընթացը, սակայն արաբական բարբարոս հորդաների ավերածությունները արգելակեցին այդ առաջընթացը և խանգարեցին հայ հասարակական կյանքի ու մտքի բնականոն, նորմալ զարգացումը։

Այժմ ծանոթանանք 8-րդ դարի նշանավոր բանաստեղծ-երաժիշտ Ստեփանոս Սյունեցու և նրա ընտանիքի հետ, ուր հասակ առավ, կրթվեց ու դաստիարակվեց, ուժեղ կերպով Ստեփանոսի ազդեցությունն իր վրա կրեց նրա շնորհալի քույրը՝ Սահակդուխտը։

«Էր սա որդի աւագ երիցու մեծ մայրաքաղաքին Հայոց Դվնա,— Ստեփանոսի մասին գրում է Օրբելյանը, — և սնանէր զարդանայր ուսմամբ ի տան կաթողիկոսարանին Հայոց»[1]։

Երևում է, որ քույր ու եղբայր եղել են կրթված, գրագետ ու գրասեր ընտանիքից, որն ապրել է մայրաքաղաքում, այն էլ կաթողիկոսարանի հետ սերտ կապված։ Բնական է, որ նրանք պետք է ստանային կանոնավոր և բազմակողմանի կրթություն՝ այդպիսի մի միջավայրում։ Հայրապետանոցում ստացած կրթությամբ չի բավականանում Ստեփանոսը։ Նա սկզբ-

[1] Ս. Օրբելյան, *Պատմութիւն Նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 132։

բում գնում է ժամանակին շատ անվանի Մաքենացոց վանքի դպրոցը՝ Սևանա լճի հարավ-արևելյան կողմում, որտեղ իր գիտելիքներով ու սրբափայլ վարքով հռչակված էր «հարանց հայրը» Սողոմոն գիտնական վարդապետը։ Ստեփանոսի միշտ որոնող միտքը այս վանքում ստացած կրթությամբ էլ չի բավականանում և գնում է Սյունյաց վարդապետարանը, որն այն ժամանակ համարվում էր Հայաստանի նշանավոր, բարձրագույն հոգևոր դպրոցը և որակվում էր որպես «բոլոր իմաստությունների աղբյուր»։ Այս դպրոցն ավարտելուց հետո Ստեփանոս Սյունեցին ստանում է ամբիոն և ինքն է ուսուցանում վարդապետանոցում որպես դասախոս։

«Նստաւ յամբիոնն բարունական և մէկնէր դաստուածային գիրս աշակերտելոցն ի վարժարանին»[1]։

Ստեփանոս Սյունեցու միշտ որոնող միտքը այս անվանի դպրոցում ստացած գիտելիքներով էլ չի գոհանում և մեկնում է արտասահման՝ Կ. Պոլիս, Հռոմ՝ հունական և հռոմեական գրականությունն ու իմաստասիրությունն ուսումնասիրելու համար։ Երկար տարիներ Հունաստանում և Հռոմում սովորելուց ու կատարելագործվելուց հետո, գիտնական բանաստեղծը վերադառնում է հայրենիք և նվիրվում մատենագրության ու երաժշտության։ Նա եղել է 8-րդ դարի ամենաղարգացած մարդը, ամենանշանավոր հրապարակախոսն ու երաժշտագետը։ Նա ունեցել է բեղմնավոր գրիչ ու բազմակողմանի տաղանդ։ Գրել է ճառեր, մեկնություններ՝ դավանաբանական բնույթի, զանազան թարգմանություններ. ունի նույնիսկ քերականական մի մեկնություն, որի համար էլ հավանաբար ստացել է «քերթող» անունը։ Բայց ամենից շատ մեզ հետաքրքրում է Սյունեցին որպես երաժիշտ և որպես բանաստեղծ, որն անշուշտ իր բարերար ու բազմակողմանի ազդեցությունն է թողել քրոջ՝ Սահակդուխտի վրա։

Ստեփանոս Սյունեցու բանաստեղծական և երաժշտական տաղանդի մասին Կիրակոս Գանձակեցին ասում է.

«Մեծն Ստեփանոս Սյունեցի աշակերտ Մովսէսի ...արար ե երգս հոգևորս քաղցր եղանակաւ, շարականս և կցուրդս և այլ երգս[2]»։

Իսկ Ստ. Օրբելյանը Սյունեցու հատկապես երաժշտական գործունեության մասին ավելի որոշակի և ավելի մանրամասն է խոսում.

«Արար և ճառս բազումս բաժանեաց զութն ձայնսն և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնսն, երգեաց կցուրդս քաղցրահամս յարմարեաց և զսաղոգին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, և զպահոցն, որ յաղուհացսն երգի. մեկնեաց և զխորհուրդ գիշերային պաշտամանն»[3]։

Դժբախտաբար, որքան շատ են տեղեկությունները Ստեփանոս Սյունեցու կյանքի ու արվեստի ասպարեզում նրա գործունեության մասին, այնքան աղքատ ու քիչ են տվյալները նրա քրոջ՝ մեր առաջին կին բանաստեղծի, երաժիշտ և երաժշտության առաջին ուսուցչուհու մասին։

Հասկանալի է, որ Սահակդուխտը ուսումն առել, երգել ու կարդացել է այդպիսի մի կուլտուրական ընտանիքում, հատկապես իր հոր՝ Սահակ

---

[1] Ստ. Օրբելյան, էջ 133։
[2] Կիր. Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1909, էջ 68։
[3] Ստ. Օրբելյան, էջ 138—139։

երեցի և եղբոր՝ Ստեփանոսի մոտ մայրաքաղաքի ամենակուլտուրական հասարակության՝ կաթողիկոսարանի միջավայրում։

Սահակդուխտի եղբայրը հաճախել ու սովորել է կաթողիկոսարանի դպրոցում։ Այստեղ էլ նա ստացել է նախնական կրթությունը։ Երևում է, որ Ստեփանոսը ոչ միայն ուժեղ չափով ազդել է քրոջ բանաստեղծական ու երաժշտական ընդունակությունների վրա, այլև զարկ է տվել Սահակդուխտի ընդունակությունների զարգացմանը։

Մեր մատենագրության ու նրա պատմության մեջ մի փոքրիկ պատառիկ տեղեկություն կա Սահակդուխտի մասին միայն մի պատմագրի՝ Ստեփանոս Օրբելյանի մոտ, այն էլ ընդամենը տաս տող, երբ նա խոսում է Ստեփանոս Սյունեցու մասին, ի միջի այլոց ասում է նաև այդ մի քանի բառերը եղբոր կապակցությամբ։

«Էր և սորա քոյր մի՝ ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան և առանձնացեալ ի ձորակին Գառնւոյ յայրի միոջ, և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին որոյ անուն Սահակդուխտ[1]»։

Հայտնի չէ, թե ինչն է եղել պատճառը, որ ավագ երեց Սահակի դուստրը, այդ մատաղ, «փափուկ և սպիտակ հասակով կույսը, մենասեր յաւերժահարսին նման թողուց հեռացաւ յաշխարհէ և միայն իր ընտանեաց սեփական տուրքը՝ հոգեխոս քնարն առաւ հետը և մէկ հատիկ արժանաւոր միայնութեան տեղ ընտրեց հոնդ, գեղեցիկ, վեհ ու անդնդախոր պատմական Գառնիի ձորերի քարայրերում։

700—730 թթ. չեն հիշատակվում Տեռամա լեռներում կամ Սյունյաց անտառներում կուսանոցներ կամ աննաս մենակյաց ճգնավոր կույսեր, որպիսին Սահակդուխտն է եղել։ Շատ հնարավոր է, որ պատանեկական հոգեկան մի ծանր վիշտ և կամ գուցե անհայտ, անարձագանք մի սեր ստիպել է գեղատեսիլ այդ «սպիտակ» կույսին մատաղ հասակում թողնել ընտանիքը, հրաժարվել դեռ նոր իր համար ծաղկող կյանքից և առանձնանալ Գառնիի ձորի մութ քարայրներում։ Հավանական է, որ Սահակդուխտի տնից հեռանալը տեղի է ունեցել եղբոր գնալուց հետո, երբ նա ուսում էր որոնում Հայաստանի վանական դպրոցներում և կամ դարձյալ ուսման նպատակով արևմուտք (Կ. Պոլիս, Հռոմ) գնացած տարիներին։

Պատմագրի հաղորդածից երևում է, որ Սահակդուխտը ապրելով քարանձավում ու մենության մեջ, բոլորովին էլ կտրված չի եղել աշխարհից ու իրական կյանքից։ Իր եղբոր արժանավոր շնորհալի քույրը, թեկուզ և քարայրում, զբաղվում էր երաժշտությամբ և մանկավարժությամբ։ Եթե Ստեփանոսը «կարգում ու շարում» էր շարականները, կարգավորում ու դասավորում էր մեր հին կլասիկ երաժշտության՝ եկեղեցու ութ ձայներն ու եղանակները, հարստացնում էր մեր հոգևոր երգն ու երաժշտությունը՝ իր «քաղցրահամ» կցուրդներով[3], ապա Սահակդուխտը թե-

[1] Ստ. Օրբելյան, էջ 139։

[2] Հ. Ղ. Ալիշան, «Յուշիկք հայրենեաց», Ա. հատոր, էջ 290։

[3] Կցուրդ կոչվում է մեր եկեղեցական հոգևոր երգը։ «Ինչ որ Հ. Օձնեցու «Ատենաբանութեան» և Թեոդորոսի «Դովեստի» մեջ կցուրդ է կոչվում, նույնը շարականի մեջ... ասվում է հոգևոր երգ, որ մեր մատենագրության մեջ հաճախ հիշվում է սաղմոսների և օրհնությունների հետ... իսկ կցուրդ կոչվել են առանձնապես նոր հոգևոր երգերը նույնիսկ 5-րդ դարում։

Նոր երգերը այսպես կցուրդ կամ կցորդ կոչվել են այն պարզ պատճառով, որ

կուզ և մութ մենության մեջ, զբաղվում էր բանաստեղծություններ և երգեր հորինելով։ Եթե եղբայրը Մաքենյաց և Սյունյաց վարդապետարաններում ամբիոնից սովորեցնում էր հայոց բանն ու քաղցր եղանակները, ապա քույրը նույնպես զբաղվում էր ուսուցանելով քաղցր մեղեդիներ ու երգեր։ Գալիս էին Գառնիի ձորը խումբ-խումբ տղաներ ու աղջիկներ Սահակդուխտի մոտ՝ երգ ու երաժշտություն սովորելու։ Հեղահամբույր ու սեսաքեմ կույսը նստում էր վարագույրի ետև և այնտեղից սովորեցնում իր աշակերտներին։

«Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ ի ներքո վարագուրի նստեալ ուսուցանէր զբազումս»[1] — ասում է Ստ. Օրբելյանը։ Սահակդուխտը նաև մեր առաջին կին երաժիշտն է, երաժշտության առաջին դասատուն և առաջին կին մանկավարժը։

Սահակդուխտը հորինել է հոգևոր երգեր՝ կցուրդներ, մեղեդիներ, շարականներ, որոնցից մեկը նվիրված է եղել Մարիամ աստվածածնին և այդ բանաստեղծության տների սկզբնատառերը կազմել են իր անունը՝ Սահակդուխտ։ «Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ սրբուհին Մարիամ, որ իւր անուամբն է յօրինեալ»[2]։ Սակայն շատ ափսոս, որ Սահակդուխտի այդ ակրոստիկոս բանաստեղծությունից մեզ հասել է միայն առաջին տունը, որն է՝

«Սրբուհի Մարիամ սափոր ոսկի
Եւ տապանակ կտակարանաց,
Որ զի վերուստ զհացն կենաց
Պարգևեցեր քաղցեալ բնութեանս.
Առ նա միշտ բարեխօսեա՝
Վասն քաւութեան մեղաց մերոց»[3]։

Մեզ հասած բանաստեղծության այս բեկորից էլ երևում է, որ Սահակդուխտը լավ ծանոթ է եղել մեր շարականների «մեծացուսցէ» կոչված տեսակին, ուր փառաբանվում է Մարիամ Աստվածածինը։ Ճիշտ է, Սահակդուխտը ընդհանրապես լավ է իմացել մեր շարականները, որոնք ութերորդ դարում դեռ այնքան էլ շատ ու բազմատեսակ չէին (ինչպես այն եղել է հետագա դարերում, մինչև 13-րդ դարը, երբ փակվեց շարականների մուտքը ժամակարգության մեջ), բայց և այնպես վերևում հիշված նրա բանաստեղծությունից պարզվում է, որ ձևի ու բովանդակության շատ նմանություններ կան Սահակդուխտի գրածի և մյուս «մեծացուսցեների» միջև։ Մեր ասածը հիմնավորելու համար բերենք մի քանի օրինակներ այդ տեսակի շարականներից։

«Կանոն ծննդեան սուրբ Աստուածածնին» շարքից վերցնենք «Առաւօտ խաղաղութեան և արուսեակ գուարթարար» «մեծացուսցէի» վերջին տունը։

դրանք սկզբում եղել են փոքրիկ երգեր և իրրև հավելված ասվել, կցվել են Ս. գրքի սաղմոսներից կամ օրհնություններից հետո». Մ. Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք առաջին, էջ 480, 1944, Երևան։

[1] Ստ. Օրբելյան, նույն տեղում, էջ 139։

[2] Նույն տեղում։

[3] Հ. Ղ. Ղևոնդ, Մ. Ալիշան, «Ցուցիկք հայրենեաց հայոց», հատ. Ա, էջ 291, 1869, ս. Էջմիածին։

«Տապանկ ապրեցուցիչ[1]
Եւ տաղաւար Արրահամեան,
Անդադար երգով սոքօք
Զքեզ միշտ մեծացուցանեմքդ»

Բերենք մի ուրիշ համեմատություն «Աւետեաց կանոն»-ից.

«Ուրախ լեր սափոր ոսկի երկնային,
Հացին որ զառ ի վերուստ իջեալ,
Զմանանայն կենաց նորոյս
Պարգևեալ կերակուր Իսրաելի...»[3]

Կամ

«Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս
Որով ելք յերկիր աւետեաց հորդեալ...[4]» և այլն։

Եթե Սահակդուխտի բանաստեղծության մեջ Մարիամ տիրամայրը երկնից կենաց հաց է տալիս քաղցած մարդկությանը, ապա «Աստուածածնայտնությեան» կանոնի «երկրորդ աւուր» օրհնություն կոչված շարականի մեջ ծարաված մարդկությանը Մարիամը կենաց աղբյուրից ջուր է տալիս, որ ծարավների հոգին հագեցնա և մեղավորները մաքրեն իրենց մեղքերն այդ երկնային ջրով ու իրենց արտասուքներով.

«Աղբյուր կենաց բղխեալ յեղեմայ սուրբ աստուածածին
Որով արբեցաւ երկիր ծարաւուտ հոգւոյն իմաստիւք.
Տալ մեզ մաղթեա աղբիւրս արտասուաց,
Մաքրել զմեզ ի մեղաց մերոյ»։

Իսկ այս շարականի վերջին տան մեջ արդեն տրված անմահական հացի և ուրախարար բաժակի համար հեղինակը կոչ է անում՝ փառաբանել աստվածածնան հոգևոր երգով.

«Զանապական կոյսն Մարիամ աստուածածին,
Խոստովանի սուրբ եկեղեցի,
Ուստի տուաւ հացն անմահութեան
Եւ բաժակ ուրախարար
Տուք օրհնութիւն նմա հոգևոր երգով»։

Վերջապես նույն կանոնից դարձյալ աստվածածնան նվիրված մի ուրիշ շարականի երկրորդ տունն էլ համեմատենք և սահմանափակենք։

«Փափկութեան դրախտին, բացող բանալի,
Քրիստոսի բարձող, նմանող երկնից,
Սափոր ոսկեղեն լի մանանայիւ,
Գաւազան ծաղկեալ յարմատոյն յեսեայ՝
Տաճար լուսոյ մորն...»[7]։

---

[1] Մեջ բերվող բոլոր շարականները տողատել է հոդվածագիրը։
[2] Շարական Ս. Էջմիածին, 1830, էջ 14։
[3] Շարական, էջ 19։
[4] Անդ, 19։
[5] Շարական, էջ 31։
[6] Մեր շարականների մեծ մասը սովորաբար կազմված է լինում 3 տնից։
[7] Շարական, էջ 32։

Այս շարականների համեմատությունները, տեղ-տեղ նույնիսկ բառացի նմանություններն ու կրկնությունները, մեր կարծիքով ցույց են տալիս երկու բան.

Առաջին՝ քիչ վերևում մեր այն կարծիքը, որ Սահակդուխտը հմուտ է եղել ոչ միայն երաժշտական արվեստի մեջ, այլև շատ լավ իմացել է շարականները, հատկապես նրանց մեծացուսցեների տեսակը, հաստատվում է բերված օրինակներով։ Վերջիններս բոլորն էլ ներբողներ են՝ նվիրված աստվածածնուն «մեծացուսցէ» շարականներից, որոնք վերագրվում են Մովսես քերթողին՝ 5-րդ դարում։

Երևացող նմանությունները, ոմանք հիմք են տալիս ենթադրելու, որ այդ շարականների մի մասը, հնարավոր է, որ գրած լինի Սահակդուխտը, որոնք որպես կցորդ և մեղեդիներ հետագայում մտել են ժամակարգության կանոնների մեջ, ինչպես մտել են շատ շարականներ՝ Ստեփանոս Սյունեցու գրածներից։

Պետք է ասել, որ մեր շարականներից շատերի հեղինակները դեռ լրիվ պարզված չեն, հետևարար դժվար է միայն վերլուծությամբ ու նմանությամբ որոշել նաև այդ շարականների ժամանակը։ Մովսես քերթողին մեր Շարակնոցի (1830 թ.) առաջաբանը վերագրում է «զճրագալուցի ուրախացիրն, զկարգ ծննդեանն և զԱնթառամ, զՏեառն ընդ առաջին, զՅարութեան հարցսն, և զառաջին պատկերսն Հոգւոյ գալստեան, զվարդավառի և զվերափոխման և զՄեծացուսցէքն»[1]։

Բայց որ «մեծացուսցէքն», որովհետև այդ տեսակ շարականների թիվը մեր շարակնոցներում հարյուրների է հասնում, որոնք մտնում են տարբեր կանոնների մեջ և ունեն տարբեր ձայներ և բոլորովին տարբեր ձև ու արտահայտչական միջոցներ։ Հետևարար ճիշտ չի կարող լինել, որ բոլոր մեծացուսցեները մի մարդու գրածը լինեն, ով էլ լինի նա։ Որ այդ մեծացուսցեների մեջ կան նաև Սահակդուխտի ձեռքով գրածներ, դա շատ հնարավոր է, բայց որը դրանից, ինչպես պարզել այս հարցը, ժամանակն է, որ մեր բանասիրությունը այս խնդրով զբաղվի։

Կա մի գեղեցիկ լիրիկական շարական էլ մեր ժամակարգության մեջ, որը ոչ թե բխում է Ս. գրքի այս կամ այն ասույթից, այլ ունի ազգային գույն ու պատմական նշանակություն։ Դա Վահան Գողթնացուն նվիրված «Զարմանալի է ինձ» բառերով սկսվող Բ2 (երկրորդ) ձայն ունեցող, 5 տնից բաղկացած հայտնի շարականն է։ Ավանդությունը այս սրտառուչ ներբողը վերագրում է Վահանի քրոջ՝ Խոսրովդուխտին, ինչպես նշվեց հոդվածի սկզբում։ Սակայն մեր մատենագրության ու հիշատակարանների մեջ ոչ մի տեղ գրավոր որևէ հիմք չի մնացել այդ մասին, որ Խոսրովիդուխտը եղել է բանաստեղծուհի, գրել է շարական կամ ուրիշ մի որևէ ժանրի գործ։ Այժմ քննենք այն հարցը, թե ով է գրել այդ շարականը։

Դեռ 19-րդ դարի երկրորդ կեսերում մեր բանասիրության մեջ եղել են կարծողներ, որ այդ շարականը հավանաբար գրել է Սահակդուխտը։ Հ. Ալիշանը դեռևս 1869 թ. Վահան Գողթնացու և նրան նվիրված շարականի մասին խոսելիս, ենթադրում է, որ եթե ավանդությունը լուր Խոսրովիդուխ-

[1] Շարականի առաջաբանը, 1830, էջմիածին, էջ 3։

տի մասին, ապա այդ շարականը անկասկած պետք է վերագրվեր կամ Վահանի կնոջը, կամ Սահակդուխտին։

«Սա ինքն է աւանդութեամբ վկայեալ և սրբադանեալ երգուհի մեր, զոր թեև նա (աւանդութիւնն) լռէր, հարկ էր մեզի կարծել՝ կամ Վահանայ անտարակոյս սիրողը, այսինքն իրեն հարսնացեալ Սիւնեաց օրիորդը և կամ անոնց երկուքին ժամանակակից և վկայուած մեծանուն հայ երգուհի մ՚ալ, որ քեզ ալ Հայկակ, անծանօթ չէ Սահակդուխտն այն՝ քոյրն Ստեփանոսի Սյունեցւոյ»[1]։

Այսպիսի կարծիք հայտնվել է նաև մի ուրիշ, նույնպես մեծանուն բանագետի կողմից։ Խոսելով Սահակդուխտի մասին որպես բանաստեղծուհի, Մ. Օրմանյանը ասում է.

«Իրեն գրվածքներեն կհիշվի Սրբուհի Մարիամ երգը գուցե և Վահան Գողթնացիի «Զարմանալի է ինձ» շարականը, որը փափուկ զգացումներ կբուրե, որ ուրիշներե Վահանի քրոջ կվերագրվի (589), որ ծանոթ անձ մը չէ, մինչ Սահակդուխտի ու Վահանի մեջ առաջուց հոգեվոր հաղորդակցություն եղած ըլլալը շատ հավանական է»[2]։

Վահան Գողթնացին, Խոսրովիդուխտը և Սահակդուխտը ժամանակակիցներ են եղել, գուցե և աննշան տարբերությամբ՝ հասակակիցներ։ Այն տարիներին, երբ Վահանը հոգեկան խորն ու ծանր ողբերգություններ ապրելով՝ անօգնական թափառում էր Հայաստանի մենաստաններն ու վանքերը, հավանական է, որ այդ թափառ կյանքում Վահան Գողթնացին եկել է նաև Գառնի, ուր երկու բարեպաշտ և գեղեցիկ երիտասարդները ծանոթացել են, ստեղծվել է նրանց մեջ հոգեկան կապ՝ ինչպես իրավացիորեն այդ կապի մասին ենթադրում են երկու հմուտ ու մեծանուն հայ բանագետները՝ Հ. Ալիշանը և Մ. Օրմանյանը։

Այժմ անցնենք Վահան Գողթնացուն նվիրված նշանավոր շարականի քննությանը, թե ով է այն գրել, Խոսրովիդուխտը, թե՞ Սահակդուխտը։

Եթե Խոսրովիդուխտի բանաստեղծ լինելու մասին միայն ավանդությունն է ասում, որը չի կարող հիմք համարվել, ապա Սահակդուխտի մասին մենք ունենք պատմական գրավոր հիմք և այն էլ մեր պատմաբանների մեջ օբյեկտիվ պատմիչներից մեկը, որը, ինչպես տեսանք, հիացմունքով է խոսում Սահակդուխտի մասին, որ նա գրել է ոչ թե մի, այլ շատ բանաստեղծություններ՝ «շարականներ, մեղեդիներ», որոնցից մեկն էլ «Սրբուհի Մարիամն» է, որը հավանաբար մի պոեմ է եղել, կամ համեմատաբար դեպս 9—10 տնից ոչ պակաս մի գործ, որովհետև պատմիչն ասում է, որ բանաստեղծության տների գլխատառերը կազմել են Սահակդուխտի անունը, որը 9—10 տառ է կազմում՝ մեր մատենագրության մեջ գործածված իր տարբեր ձևերով (Սահակդուխտ, Սահակիդուխ, Սահակադուխտ)։

Բացի այդ, մեր հին գրականության մեջ ակրոստիկոս կազմող բանաստեղծությունները շատ անգամ միայն հեղինակի անունը չէ, որ դրսևորում են գլխակապ գրերով, այլ նաև՝ թե ում գրածն է այդ գործը՝ «երգը», «բանը»։ Օրինակ՝ Նարեկացու ակրոստիկոսներից շատերը կազմում են «Գրիգորի է երգս», «Գրիգորի է բանս այս»։ Շնորհալու նույն ձևի գրած-

[1] Հ. Ալիշան, «Ցուցիկք հայրենեաց հայոց», հատ. Բ. էջ 196, Վենետիկ, 1869։
[2] Մ. եպ. Օրմանյան, «Ազգապատում», Ա., էջ 867—868. կ. Պոլիս, 1912։

ները կազմում են «Ներսէսի է երգ», «Ներսէսի է երգս այս», Այսպես է և Խաչատուր վարդապետ Տարոնեցու «Խորհուրդ խորին» հանրահայտ բանաստեղծությունն ու երգը և այլն և այլն։

Ուրեմն՝ շատ հավանական է, որ Սահակդուխտի գրած «Սրբուհի Մարիամ» բանաստեղծությունը եղել է 15—18 տուն կազմող մի գործ, գուցե և ավելի։

Այնուհետև եթե անգամ ընդունենք, որ մեզ հասած անգիր այդ ավանդությունը ճիշտ է, որ այդ շարականը գրել է Վահան Գողթնացու քույրը՝ Խոսրովիդուխտը, բայց շարականի ոճը, հեղինակի լիրիկական դիմումները, ներբողված հերոսին, բոլորովին այլ բան են ասում։ Եթե Վահանը Գողթնյաց Խոսրով իշխանի տղան է, տեր է, այսինքն՝ ոչ հասարակ ռամիկ մարդ, ապա Խոսրովիդուխտն էլ նույն իշխանի աղջիկն է, տիրուհի է, այսինքն՝ ոչ հասարակ գեղջկուհի, այլ իշխանի դուստր, նշանակում է բանաստեղծության ամեն տան վերջում քույրը չէր ասի եղբորը «ով երանելի տեր Վահան», կամ վերջին տան վերջում չէր ասի «ով երանելի տեր Վահան Գողթնեացն իշխեցողդ»։ Եթե մեկ ուրիշ մարդ այդ ձևով ու ոճով դիմեր նահատակված Վահանին, այն թերևս հասկանալի լիներ, սակայն այս ձևի ոճն ու դիմումը քրոջ ոճ ու դիմում չէ։ Գուցե այդ ոճը մի կերպ հասկանալի լիներ նաև, եթե Գողթնացի Վահանը ունենար հոգևորականի կոչում, բայց Վահանը այդպիսի կոչում չի ունեցել, այլ եղել է սովորական աշխարհական մարդ, իսկ տեր բառը այն ժամանակներում գրվում էր միայն հոգևորականների ու իշխանների անունների վրա։

Վերջին «Գողթնեացն իշխեցողդ» բառերը ցույց են տալիս, որ շարականի հեղինակը ոչ միայն Վահանի քույրը չէ, այլ Գողթնացի էլ չէ, որովհետև քույրը այդպես չէր դիմի եղբորը, քանի որ ինքն էլ Գողթնացի է եղել։

Շարականում արտահայտված նուրբ, սիրային ու լիրիկական զգացումները ցույց են տալիս, որ իրոք նախապես, մինչ այդ շարականը «հոգեկան հաղորդակցություն» է եղել Սահակդուխտի և Վահանի մեջ, որ ամբողջ բանաստեղծության մեջ արտահայտված մտքերն ու զգացումները ավելի շուտ պատկանում են Սահակդուխտին, քան թե Խոսրովիդուխտին։ Ահա այդ շարականը.

«Զարմանալի է ինձ քան զերգս երաժշտականաց.
Զայնս ողբոց քոց հնչմունք,
Ով երանելի Տեր Վահան, ընտրեալ յԱստուծոյ»[1]։

Այս առաջին տունը ցույց է տալիս, որ շարականի հեղինակը միաժամանակ երաժշտության հետ սերտ կապված բանաստեղծ է, երաժիշտ է, որպիսին, ինչպես ասել ենք, եղել է Սահակդուխտը։

Երկրորդ տունը.

«Առաւել յորդորէ այս զհոգւոյս մասունս
Յորինել քեզ երգս ոչ զղջականս.
Այլ հոգևորս և ուրախարար, յորդորականս և ներբողեանս
Ով երանելի Տեր Վահան, ծառայ Քրիստոսի»[2]։

[1] Շարական, էջ 460։
[2] Նույն տեղում, էջ 460։

Բանաստեղծուհին հիանում է Վահանի հերոսությամբ, և «զարմանալի» է, որ նա փոխանակ ողբալու նրա վրա, տխուր ողբերի փոխարեն երգում է «ուրախարար» երգեր ու «ներբողներ»։ Հեղինակը ուրախանում է Վահանի տարած հոգեկան հաղթանակի համար, նրա գերմարդկային հաստատ վարմունքի համար։ Այս ամենը ոչ միայն զարմացրել են բանաստեղծուհուն, այլև ցնցել նրա ամբողջ հոգեկան աշխարհը — «զնոգւոյս մասունս» — միտքը, կամքը վարարող զգացումները։ Եվ ահա Վահան Դողթնացու այդ հերոսական մահվանը վայել ուրախ ներբողյաններ է երգում հեղինակը օտար հողերի վրա արյուն թափած ազնիվ հայի ու ջերմ հայրենասերի համար։

Երրորդ տունը՝

«Զարհուրեցուցանէ զքո ճգնութիւնդ
Զմարմնոյս բնութիւնն,
Իսկ դու առաւել գտար,
Ով երանելի տեր Վահան սիրող Քրիստոսի»[1]։

Աստանդական թափառաշրջիկ կյանքը, կրած զրկանքները, հոգեկան անելանելի ծանր ապրումները, այս ամենը Վահանը տարել է տոկալով, անտրտունջ ու հերոսաբար։ Վահանի այսպիսի ուժեղ հոգի ու սիրտ ունենալը երգչուհուն զարմանքից հասցնում է զարհուրանքի։ Բայց այս բոլոր տանջանքները անտեղի չեն անցել. Վահանը դրանց փոխարեն «առաւէլ է գտել»։ Նա այդ հերոսական մահով գտել է փառք, պարծանք, հիշատակ և դարձել է «երանելի» անմահ։

Նախավերջի տան մեջ հեղինակը ուզում է ասել, որ օտար բանաստեղծների (հավանաբար հունական և հռոմեական) ու իմաստասերների պաճուճարան գործերն ու հերոսները, սնոտի պատրանքներ ու դատարկ բաներ են Վահանի հերոսական, առաքինի գործի ու նահատակության համեմատությամբ։

«Արտաքնոցն ըզգաստքն
Ստեղծիչ բանք սնոտեայն ի պատրութիւն.
Իսկ քոյդ սիրայնոյ Աստուածարեալ և ոգեշահ,
Ով երանելի տեր Վահան, ընտրեալ ազատաց»[2]։

«Արտաքնոցն բանք սնոտեայք ի պատրութիւն» ասելով ամենայն հավանականությամբ հեղինակը նկատի ունի հունական անտիկ գրականությունը ու նրանց առասպելական հերոսները, ըստ երևույթին, «Իլիական»-ում և «Ոդիսական»-ում։

Շարականի այս տունը հատկանշական է նրանով, որ հեղինակը ոչ միայն լավ ծանոթ է եղել արևմուտքի գրականությանը, այլև կարողացել է վերլուծել, գնահատել ու բնորոշել այն, որպիսին երբեք չէր կարող անել Խոսրովիդուխտը, որովհետև նա այդպիսի կրթություն ու զարգացում չի ունեցել։ Մենք նպատակով կանգ առանք Սահակդուխտի միջավայրի և հատկապես նրա եղբոր՝ Ստեփանոս Սյունեցու կյանքի վրա։ Արդեն ասել ենք, որ ուժեղ է եղել Սյունեցու ազդեցությունն իր քրոջ վրա և ընդու-

[1] Շարական, էջ 460։
[2] Նույն տեղում։

նակ ու արվեստասեր երիտասարդ աղջիկը մեծ չափով օգտվել է իր եղբոր գիտելիքներից, այդ թվում նաև «արտաքնոցն բանքա»-ից (դրսի, արտասահմանյան գրականություն)։ Բանաստեղծության այս տունն առավել համոզեցուցիչ է այն բանի, որ այս շարականը, իրոք, պատկանում է «երգի ու արվեստի մեջ հմուտ» Սահակդուխտին և ոչ թե Խոսրովիդուխտին։

Վերջին տան մեջ երգվում է Վահանը որպես հայրենիքի քաջ զինվոր, որը պատրաստվում է պատերազմի՝ թշնամուն հաղթելու համար։ Հայաստանից Բամասկոս ամիրապետի մոտ Վահանի գնալը, նրա համարձակ հայտարարություններն ու վճիռը այն մասին, որ ինքը պատրաստ է մեռնելու քան թե ուրանալու իր աղգն ու հայրենիքը, իսկապես սա մի անհավասար, անսուր, հոգեկան պատերազմ էր, ուր մի օտար, անօգնական բայց հոգով զինավառ ու կորովի երիտասարդը մենակ հոգեպես հաղթեց «հարաւայնոյ» (արաբական) աշխարհացուցց ահեղ պետությանը, հավատարիմ մնալով իր նախնիքների ավանդներին ու հայրենիքին։

Ահա և վերջին այդ տունը.

«Որպէս զքաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ,
Կատարեցեր զընթացքս քո արիաբար յազգացն հարաւայնոյ,
Դասաւորեալ ընդ անմարմնականսն.
Ով երանելի տեր Վահան Գողթնեացն իշխեցող»[1]։

Իհարկե այսպիսի բովանդակալից, բազմիմաստ ու հորդ զգացումներով մի ներբող-շարական չէր կարող հանկարծակի գրել Գողթանում ապրող, որբացած, թալանված ու կրթություն չունեցող մի աղջիկ։ Խոսրովիդուխտը Վահանից շատ մեծ չէր կարող լինել։ «Կրակի տարին» (706 թ.) Վահանը 4 տարեկան էր, երբ գերի տարան։ Խոսրովիդուխտը, եթե իրոք այդպիսի քույր ունեցել է Վահանը, այդ տարին շատ-շատ կարող էր 10 տարեկան լինել։ Հոր այրվելուց ու գույքը թալանվելուց հետո Խոսրովիդուխտը հավանաբար ապրել ու մեծացել է իր հարազատների կամ բարեկամների մոտ։ Այդ տարիներին, այդ պայմաններում Խոսրովիդուխտը չէր կարող սովորել (այն էլ որտեղ կարող էր սովորել, նախ երկիրն ավերված էր և երկրորդ՝ այդ ժամանակ աղջիկները սովորելու դեռ չէին գնում, այլ սովորում էին ընտանիքում՝ ինչպես Սահակդուխտն է սովորել հորից ու եղբորից), կանոնավոր կրթություն ստանալ, բանաստեղծություն գրելու համար։ Վերևում բերված օրինակներն ու շարականի վերլուծությունը հիմք են տալիս ասելու, որ Վահան Գողթնացուն նվիրված «Զարմանալի է ինձ» շարականը գրել է ոչ թե Վահան Գողթնացու քույրը՝ Խոսրովիդուխտը, այլ Ստեփանոս Սյունեցու քույրը՝ Սահակդուխտը, որը եղել է հեղինակ բազմաթիվ երգերի, մեղեդիների ու շարականների։

Հնարավոր է, որ Գողթնացին և Սահակդուխտը անձնական ծանոթներ էլ եղած լինեն։ Նրանք երկուսն էլ ժամանակակից երիտասարդներ են եղել։ Արարիայից վերադառնալուց հետո Վահանը թափառաշրջիկ կյանք էր վարում Հայաստանի վանքերում ու մենաստաններում։ Նա եղել է Դվինում, Էջմիածնում, Արագածոտն դավառի, Շիրակի, Գեղարքունյաց, Սյունյաց և այլ վանքերում։ «Եւ յայնմ հետէ ոչ լինէր նմա հանգիստ և պայար՝ ուրեք,

[1] Շարական, էջ 460։

այլ զկինն թողեալ առ ընտանիս իւր եւ զինքն Աստուծոյ և կամաց նորա»[1], հնարավոր է, որ այս թափառումների ժամանակ Վահանն ու Սահակդուխտը ծանոթացած լինեն, կամ Դվինում (նախքան Գառնի գնալը) կամ Գառնիում, երբ ճգնակյաց կյանք էր վարում անվանի կույսը։

736 թ. երբ տեղի ունեցավ Ստեփանոս Սյունեցու սպանությունը[2] Վայոց ձորում, այդ տարին Վահանը իր կնոջ ու հարազատների թախանձանքներին ընդառաջելով մի տարի մնաց այդ տեղ, նրանց մոտ և չթափառեց վանքերը։

«Եւ անդ ի Սունիս և ի Վայոց ձորն անցուցեալ տարի մի վասն թախանձանաց սիրելեացն»[3]։

Հնարավոր է, որ այդ տարում էլ Վահանը Վայոց ձորից Գառնի անցած լինի կույսի մոտ, որը այդ տարիներին Գառնիում էր։ Չի կարող պատահել, որ այդ ժամանակ անուն հանած երկու բարեպաշտ երիտասարդները, եթե անձամբ չեն էլ տեսնվել, մեկը մյուսի մասին լսած չլինեին։ Այստեղից էլ եղել է նրանց մեջ այն հոգեկան կապը, որի մասին հիշվեց։ Վահան Գողթնացու պատումների մեջ ոչ մի հիշատակություն չկա Սահակդուխտի մասին և դա զարմանալի չէ։ Գողթնացին իր հոգեցունց ապրումների մասին պատմել է միայն Արծկեի Երաշխավորաց վանքի վարդապետ Արտավազդին (սա Աբրահամ էլ է կոչվում) այն ժամանակ, երբ նա որպես անցորդ հյուր՝ երեք օր մնաց այդ վանքում։ Կարեկից և շնորհալի վարդապետը գրի է առել Վահանի ողբերգական կյանքի «Ողբը»[4] վկայաբանությունը։ Եթե անգամ Վահանը ծանոթ էլ լիներ Սահակդուխտին, դժվար թե այդ մասին նա մի բան ասեր Արտավազդ վանականին, այն էլ 3 օրվա կարճատև ծանոթության ընթացքում։ Իսկ եթե Վահանը ակնարկած կամ պատմած էլ լիներ այդ գեղեցիկ, բարեպաշտ ու շնորհալի կույսի մասին, դժվար թե Վահանի այդ կապի մասին վանական վարդապետը հիշատակեր իր «Ողբի» մեջ, ուր նկարագրված է Վահան Գողթնացու կյանքը և արաբական բարբարոսությունները։

Այսպես ուրեմն. Սահակդուխտը եղել է 8-րդ դարի առաջին հայ կին բանաստեղծը, երաժշտագետն ու երաժշտության առաջին ուսուցչուհին։ Նա

---

[1] «Սոփերք հայկականք», ԺԳ, էջ 72։

[2] Այս խոշոր գրողն ու երաժշտագետը, որին մենք համառոտակի ծանոթացանք, ունեցավ շատ անսպասելի և ողբերգական վախճան 736 թ. հուլիսի 23-ին։ Սյունեցին իր շրջայելու և քարոզելու ժամանակ այդ թվականին եղավ Եղեգնյաց գավառի (Վայոց ձոր) Մոզան գյուղում։ Այստեղ ապրում էր մի հարուստ, անբարոյական կին, որին իր սանձարձակ վարքի համար Սյունեցին մի քանի անգամ հանդիմանել էր՝ նրան ուղղելու համար։ Այս անգամ էլ, երբ Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոսը ավելի խիստ և հրապարակով հանդիմանեց այդ պոռնիկ կնոջը, վերջինս որոշեց սպանել նրան։ Մոզան գյուղից ոչ հեռու մի աղբյուրի մոտ, մի ուռենի սաղարթախիտ ծառի վրա իր տաղավարում ամառվա շողից հանգիստ էր առնում Սյունեցին։ Այդ պոռնիկ կինը վերցրեց դանակը և իր հոմանու հետ գնաց եպիսկոպոսին սպանելու։ Դանակը տալով իր տարփածուի ձեռը, այս կինը երկու անգամ ստիպեց նրան բարձրանալ ծառը և սպանել քնած եպիսկոպոսին։ Բայց հոմանին երկու անգամն էլ վախեցավ, ձեռքերը դողացին և չկարողացավ սպանությունը կատարել։ Կինը խիստ հանդիմանելով իր վախկոտ հոմանուն, ինքը բարձրացավ ծառը և սուրը կոխեց Ստեփանոս Սյունեցու փորը և սպանեց քնած տեղը։

[3] Յայսմաւուրք, կ. Պոլիս, 1830, էջ 474։

[4] «Ողբ վասն չարեացն աշխարհիս Հայոց և վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնացւոյ» («Սոփերք հայկականք» ԺԳ. 1859, Վենետիկ։

բացի «Սուրբ Մարիամ» բանաստեղծությունից գրել է նաև շարականներ, գլխավորապես ներբողներ ու մեղեդիներ՝ ձոնված Աստվածածնան «մեծացուսցէ» կարգի շարականներում։

Ինչպես տեսանք, ամենայն հավանականությամբ Սահակդուխտն է հեղինակը նաև Տողթնացուն նվիրված նշանավոր «Զարմանալի է ինձ» շարականի։ Որպես հմուտ երաժշտագետ նա հորինել է շատ եղանակներ ու սովորեցրել շատերին՝ իր ճգնարանում։

Այս տաղանդավոր կնոջ մասին, ինչպես ասացինք, բացի Օրբելյանից էլ ուրիշ ոչ մի տեղ, ոչ մի տեղեկություն չկա։

Երգահան բանաստեղծը հավանաբար մինչև իր կյանքի վերջն ապրել է պատմական Գառնիի գեղեցիկ ձորում։ Նա իր ամբողջ կյանքի ընթացքում երգեր է հորինել, երգեր սովորեցրել և երգելով վախճանվել։

«Եւ անդէն ի նմին վախճանեալ գնի ի հանգստի յորմէ բաղում բժշկութիւնք լինին»[1]։

Այսպես է վերջացնում ժլատ պատմիչը մեր նշանավոր առաջին կին բանաստեղծի մասին։

---

[1] Ստ. Օրբելյան, էջ 139։